

## Լ Ո Ռ Ի Ք Յ Ի Ն

Սիրտէ սիրտ կայ ճամբայ մ'ուղիղ ու յայտնի՝  
Որուն պահակն են աչքեր խոր եւ խօսուն՝  
Անոնք զիրար կը դիտեն պիշ ու դադանի՝  
Կը սիրեն թէ կ'ատեն. անպառ մը լռութիւն:

Սիրտէ սիրտ կայ ճամբայ մը լի խաւարով,  
Ուր դառնութիւնն է պահապան խտաղէմ,  
Անոնք զիրար կ'ատեն եւ մաղձն արիւնով՝  
Լըռութեան մէջ վը հիւսէ վրէժն իր անդէն:

Սիրտէ սիրտ կայ, կ'ըսեն, ճամբայ մը պայծառ,  
Զերդ լուրթ երկինք եւ հորիզոն հեռաւոր,  
Ծով մը հանդարտ, առադատով ոսկեւար,  
Բայց նաւուղիդն ունի կասկած ահաւոր:

Սիրտէ սիրտ կայ ճամբայ մըն ալ ըստուերոտ,  
Ուր գիծերն են տարտամ եւ գորշ լըռութեամբ՝  
Հիացման տեսիլ՝ քաղցրահայեաց եւ գըթոտ,  
Որուն վերեւ, սակայն, իջած է թուխ ամպ:

Կայ ճամբայ մ'ալ արդարեւ լայն, հարազատ,  
Խաղաղ՝ ինչպէս այդ մը դարնան օրերու,  
Մեղոյշ ակնարկ, ուղիներով ծաղկազարդ,  
Ուր կը խօսուի ծրծելով լոյսն աչքերու:

## Ձ Ա Յ Ն Ե Ր

Ձայնէ՛ր անոյշ, ձայնէ՛ր հընչուն,  
Առուակի պէս կարկաչահոս,  
Ձայնէ՛ր՝ որ սիրտը կը լընուն  
Ալիքներով զընարձախօս:

Ձայնէ՛ր դիւթիշ, ձայնէ՛ր կոյսի,  
Շեղբ մը շանթի՝ որ երկընքէն  
Կ'իջնէ պատուել սուր շէշտակի  
Մեր հոգիները քաղցրօրէն:

Պայծառ երկինք ու կապուտակ  
Ձայնէրն այդ գիւղ ու բերկրական,  
Հստեղնաշար մը ներդաշնակ՝  
Սիրոյ, Երգի ու բարութեան:

Բայց ինչպէս խորքը ջինջ ծովու,  
Ունի վիհեր, ունի դադանիք,  
Ձայնին մէջ ալ գիրդ կոյսերու՝  
Կը նիրհէ գո'ւցէ խուլ չարիք:

## Հ Ա Ր Ո Ւ Ա Մ

Դարձեալ երկինքս ամպոտեցաւ  
Ուր նունուֆարն իմ հողմավար  
Լացաւ երկար, Երկա՛ր լացաւ  
Իր պատրանքէն ամօթահար:

Հոգիս տըկար, հոգիս անգօր,  
Աղաւնի մ'ինչպէս կարեւիք  
Փրօած թեւերն իր վիրաւոր՝  
Հայցեց լըռիկ զըզուանք ու սէր:

Ի՛նչ երջանիկ՝ Երբ ցնծալին,  
Հորիզոնին վըրայ անծայր,  
Նետած կամարն իր թռչանքին,  
Երգ կը բաշխէր ու կը խայտար:

Ձարկաւ յանկարծ ոսոխն անգութ,  
Ու փշրեցաւ քնարը սրտին,  
Եկան ամպեր եւ մայրամուտ  
Արեւն հծծեց սուղ դառնադին:

Կը սպասէ ան այժմ ողբերգակ՝  
Որ դայ նորէն այդը պայծառ,  
Ծաղկին վարդեր, դաշտեր սուտակ,  
Եւ Ժպտի դէմքն իր երկնավառ:



## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԻՋՕՐԷ

Զըւարթ, պայծառ միջօրէ,  
Անդորրադեղ ու չքնաղ...  
Կը ծաւալի, կը բուրէ  
Ամէն կողմէն նրբամաղ  
Խաղաղութիւնն անսահման  
Երազներու կախօրրան:

Ու ըստուերներ երազկոտ,  
Մարմանդին վրայ երկարած,  
Եւ թաւուտքի մէջ սարսուռ  
Դարձած տեսիլ լուսամած՝  
Կը պարուրեն հողիներն,  
Հուր տենչերով տարուբեր:

Կը սիրեմ հեւքն անուշակ  
Խոտին, թուփին նորածին,  
Եւ թարմութիւնն ալիւնակ  
Նրբածաղիկ ցօղունին,  
Ուր մարգարիտն առտըւան  
Կ'ըլլայ հրաշէկ ատրուշան:

Օ՛ քաղցրութիւնն արեւուն  
Որ կը դըզուէ կաթողին  
Այտերն աղուոր մարգերուն  
Կանաչադեղ ու ջերմին.  
Օ՛ դարնային պարզութիւն,  
Որ կը շքնէ բոյր ու դոյն...:

Կապոյտն ի վար կը ծորի  
Երկինք մը ջինջ ու պայծառ,  
Երանութեան ցանկալի  
Անչեղ ուղի եւ կամար.  
Զոյգ ամբերու հեռաւոր  
Միացման լար դաշնաւոր:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

## ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐ

Ես կը ննջեմ, մինչդեռ կ'երգեն առուակներ,  
Ո՞վ կը լըսէ արդեօք իրենց մեղեդին.  
Մի՞թէ նոր վարդ պիտի բացուի այս գիշեր  
Աւետելու նոր Մայիս մ'ալ աշխարհին:

Հովն անոյշ է բուրաստանէ բուրաստան,  
Լուսնակն անոյշ առուններու երեսին.  
Ես կ'երազեմ մըլաղին երգն առտըւան  
Հասկերով լի սեմին վըրայ Յունիսին:

Երանի՛ թէ ինծի համար ալ բացուէր  
Նոր առաւօտ, արեւ մը նոր երգերու,  
Ու կըմէնէի հին օրերու մանուկ սէր

Սիրտեր տրտում չաղոտ վարդի փոխելու,  
Սըրինգն երգէր, երգէր ամէն մէկ առու  
Ու ժպտէինք, հէգ մարդկութիւն, ես ու դու:

## ՅՆՈՐՔ

Իրիկնային մեղմ ու թախծոտ մեղեդին  
Շուքերու մէջ տարտամօրէն կը շրջի,  
Ու կը դիմէ հառաչական լուսնակին  
Աղերսելով արծաթ թեւեր Յընորքի:

Այս գիշեր ալ, գիտեմ, լացող սիրտեր կան.  
Քիչ մը ցընորք ունենալու ըստիւնք,  
Իրենց վէրքերը լոյսին տակ ըստացան,  
Քիչ մը ցընորք ունենալու անըրջանք:

Պէտք ունի սիրտն երկինքներու աստղադարդ,  
Որ գիշերները փերեղման չըթըլին  
Եւ երազէ իր սիրած կեանքն ամէն մարդ:

Քիչ մը ցընորք պէտք է այս հէգ սիրտերուն  
Որ ժպտիտով նային վաղուան արեւին,  
Քիչ մը ցընորք մէջը մեղրին քաղցրութիւն: